

ԻՐԱՎՈՒՆԿ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ ՉՈՐԵՔՇԱՐԹԻ ԵՒ ՇԱՐԱԹ

Rev. Pere G. Kalemkarian Mechitaristengasse
№ 4 Vienne

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Ներկայ 1898 թվականի
Պոլիստիկոնի համար 12 փրակ
» » վեցամսեայ 6 »
Արսասանականի » 14 »
» » վեցամսեայ 7 »
ԿԱՆՆԻԿ ՎԱՐՆԱԿԻ

Համակ դրամ եռայնի դրկեղ հետեւեալ հասցեով
ԽՍԲԱԳՐՈՒԹԻՒՆ ԵՒ ԼՐԱԳՐՈՑ ՎԱՐՆԱ (ՊՈԼԿԱՐԻԱ)
Редакция на вѣстникъ
„Иравункъ“
ВАРНА (България).
Rédaction du journal
„Iravounk“
VARNA (Bulgarie)

Խմբագրութեան ուղղեալ գրութիւնք
էս չեն դրկուիր եւ յարմար դասուած-
ները միայն կը հրատարակուին ամբող-
ջով իւր մասաւր:
Իրանցական տողը 20 սանթիմ. երե-
փեւ աւելի անգամներու համար 20 0/0
գեղջ կը լինի:

ՀԱՅ ԿԱՐՕՏԵԱԼՆԵՐԸ

Ա.

Էսօր տէ գ'եգօր տ'Օրանի Մա-
յիս.յունիս թիւը կը բերէ վանի
Տօմարիկեան միաբնակներու մե-
ծաւոր և հիւպատոսական գործա-
կատար Հ. Տրփուանի չորս նա-
մակները որոնք ուղղուած են Հ.
Շարմթանի, և վանի ու իր գիւղե-
րու հայերուն աղբիւրը թշուա-
ռութիւնը կը պատկերացնեն:

Համակագիրը իր 4 ապրիլ թու-
ագրեալ նամակով կը գրէ թէ
այն դրամով զոր իրեն զրկած է
Հ. Շարմթան հայ կարօտեալնե-
րու համար, 23 գիւղերու 5408
բնակիչներուն նպաստ բաշխած է
տարւոյն սկիզբէն ի վեր. ասոնց-
մէ զատ վան քաղաքի գրեթէ 500
աղքատներ ալ օգնութիւն ստա-
ցեր են: Նպաստաւորեալներէն իւ-
րաքանչիւրին 4 ֆր. է քիչ մը ա-
ւելի բաժին ինկած է:

Տիրող թշուառութեան վրայ
յստակ գաղափար մը տալու հա-
մար Հ. Տրփուան կիմացնէ թէ մի-
այն Գարագուտնու գիւղին մէջ,
որ 1198 բնակիչ ունի, 32 հոգի
անօթութենէ մեռած են, երբ տա-
կաւին նպաստի բաշխումը չէր ըս-
կած:

Հայր Տրփուանս այս բաշխում-
ներէն ետքը կը փափագի երկու
գլխաւոր նպատակի համար աշխա-
տիլ. նախ գիւղացիներուն հերկի
կենդանի և սերմացու տալ և ապա
Այգեատանի 1896ի կոտորածէն ա-
մայացած և 200 տունէ բաղկա-
ցած մասը շէնցնել վերստին:

Սակայն Տօմարիկեան Սեծաւո-
րը իր երկրորդ նամակով որ շա-
բաթ մը ետքը գրուած է, կը հա-
ղորդէ թէ նոր երեւան ելած թը-
շուառութիւններ և նոր անմիջա-
կան պէտքեր ստիպել են զինք
գիւղացիները մահէ ազատելու հա-
մար ծախսել այն 15000 ֆռ.ը,
զոր պիտի յատկացնէր կենդանի-
ներու և սերմացուի գնումին: Այս
միջոցին է որ իրեն կը հասնի Հ.
Շարմթանէ զրկուած 20000 ֆռ.ը,
որ իրեն շունչ առնել կուտայ և
որով կը սկսի այդ գնումները ը-
նել:

Երրորդ նամակը նուիրուած է
Այգեատանի երրորդ, Գարալը
Ալլը մահալէ, և թափիկ կոչու-
ած մասերուն վերաշինութեան
գործին: Այդ տեղերու իր այցե-
լութեան մէկ նկարագիրը կընէ Հ.
Տրփուանս միջին ու տխուր գոյ-
ներով. աւեր, ամայութիւն կը
տիրէ հոն. կոտորածի հետքերը
ամէն քայլի կը տեսնուին տակա-
ւին. բնակիչներուն մեծ մասը
ցրուած է ու չի համարձակիր վե-
րագաւնայ իր աւերած տունը,
տեղը, որովհետեւ հոն ապահովու-
թիւն չիկայ և իսլամները որոնք
քաղաքին այդ մասին տիրանալ
կուզեն, շարունակ կը սպառնան
տան տէրերուն, կը հալածեն զա-
նոնք որպէս զի ձգեն իրենց սե-
փականութիւնը և ուրիշ տեղ եր-
թան, ցրուին: Սակայն բնակիչ-
ները կը փափագին հոն մնալ,
հայրենական երկրքին տակ. ա-
սոր համար Հ. Տրփուանս կը խնդ-
րեն տոժամեայ մատուց մը, դըպ-
րոց մը, կաքոյիկ քահանայ մը,
հալածանքի դադարումը հիւպա-
տոսարանի պաշտպանութեամբ, և
այլիներու ու որբերու խնամատա-
րութիւնը: Այս ամենուն համար
հարկ է որ Հ. Շարմթան 10,000
ֆռանք եւս զրկէ:

Հայոց առաջնորդարանը քաղա-
քին երկու վանքերուն մէջ 20ական
որբ պահել որոշած ըլլալով, 1000
ֆռ.ի նպաստ մը խնդրած է Հ. Տր-
փուանս, որ Հ. Շարմթանի նկա-
տառութեան կը յանձնարարէ այս
խնդիրքը:

Հայր տրփուանսի վերջին նամա-
կը որ մայիս 18 թուականը կը
կրէ, կարելի չէ կարգալ առանց
խորապէս յուզուելու վանի շուրջը
տիրող թշուառութեան վրայ: Ա-
մենքն ալ, հարուստ և աղքատ,
հաւասար թշուառութեան մէջ
ընկղմած են և հաղարաւորներ
խոտէ և արմատէ զատ սնունդ
չունին: Երբեմն միայն առան-
ձին գիւղեր, իսկ հիմայ ամ-
բողջ գիւղախմբիւր օգնութիւն կը
ազդակեն: Ամէնէն հարուստները
անոնք են որ կը յաջողին չափ մը
ցորեն քիւրտերէն փոխ առնել,
հունձքի ատեն երկու չափ տալու

պայմանով: Միաժամանակ կը
հանդիպին երբեմն տղաներու ու
րոնք երկու երեք օր բան մը չեն
կերած:

Հայր Շարմթան, որ մինչեւ հի-
մայ 700 հազար ֆռանք հանգանա-
կեց, պիտի յաջողի՝ հարկաւոր նոր
նպաստներ ճարել, որպէս զի սով-
եալները կարենան ապրիլ մինչեւ
հունձքի ժամանակ. այս հարցն է
որ Տօմարիկեան մեծաւորին միա-
բը կը զբաղեցնէ:

Արդէն շատ ընտանիքներ, ու-
րոնք դրամական նպաստ ստացած
են, խոտով կ'ապրին, որպէս զի
իրենց դրամը սերմանելու պէտքե-
րու յատկացնեն:

Ընթերցողին ուշադրութիւնը կը հը-
րաւորեմք մեր ներկայ քիչի Կ. Պոլսոյ
քրիստոնեան վրայ, որ շատ ծանրա-
կշիռ և չափազանց ծիւղ չոր մը կը
պարտանակէ և զոր վերապահութեամբ
կը հրատարակենք, չուզելով առ աշմ
հաւատարմորդ Ս. Օրմանեան այդ ա-
սիաներ արդէն ինկած ըլլայ: Դռնը
իր դերին մեջն է. սակայն Պատրի-
արք...:

ՀԱՅԱՆԵՐՔՈՒՄԻ ՄԻ ԱՌԹԻԻ

Բ.

Գալով լացի գիշերուան դամ-
բանակաւ խնդրոյն, ո'չ Պ. Սէ-
թի պահանջն է իրաւացի, ո'չ ալ
Տ. Յովակիմի պատասխանը՝ ճիշդ
Պրն. Սէթ պէտք էր գիտնար
որ ամէն բան օրէնք մը ունի:
Մեր եկեղեցական օրէնքով ալ աշ-
խարհական անձ մը եկեղեցոյ մէջ
(սեղանի վրայ կամ վարը) բեմա-
սացութեան իրաւունք չունի, և
այսպիսի իրաւունք մը չնոր-
հել թաղ. խորհրդոյ ձեռնհասու-
թեանէն ալ վեր է: Հաղիւ թէ նե-
րելի լինի զարտուղիլ այս ընդհա-
նուր օրէնքէն՝ միմիայն հոգեւոր
բարձրագոյն իշխանութեան թոյլ-
տուութեամբ: Սակէ դուրս օրի-
նազանցութիւն է: Սոյն տողերը
գործն ալ առնելով՝ դեռ երիտա-
սարդ կամ պատանի, երբ նոր ըս-
տանձնած էր Սիլիստրէի վարժա-
րանի մէջ ուսուցչութեան պաշտօնը՝
հոգաբարձութեան մէկ քմահաճ
հրաւերին վրայ՝ պատանեկան աւ-
իւնով և այն ատենուան քահանա-

յին ընդդիմութենէն զերծ՝ այս-
պիսի պարտազանցութիւն մը ը-
րած էր: Սակայն պարտազանցու-
ցութիւնը կը մնայ միշտ թերու-
թիւն ու մէկու մը կամ մէկ քա-
նիներու անտես առնուած թերու-
թիւնը օրէնքի ուժ չկրնար ունե-
նալ երբեք: Պատի այս վերջին
պարագայի մէջ ալ թոյլտուութիւ-
նը ո'չ թէ թաղ. խորհրդէն, ալ
ուղղակի հոգեւոր բարձր իշխա-
նութենէն պէտք էր խնդրել:

Իսկ Տ. Հօրը պատասխանին մա-
սին՝ որ կսկսէր «մենք ալ գիտե-
ինք»ով՝ չենք կարծեր որ այդպի-
սի բան մը հաստատուելու աստիճան
օրինաւոր ապացոյցներ ունենայ:
Նշեցելոց վրայ դամբանական խօ-
սելու համար աշխարհականաց թոյլ
տրուած տեղը եկեղեցոյ չըլլալու-
կի մէջն է և կամ գերեզմանին
քովը: Այսպէս է նաեւ օտար ազ-
գաց մէջ: Մի բանի տեղեր այս
կամ այն պարունին զինք չըլլալու-
տող թուութեանէ կամ աղիտութե-
նէ օգտուելով այս ընդհանուր օ-
րէնքը ոտնակոխ ընելը արդարա-
ցում մը չէ: Առ մեզ աշխարհա-
կան անձ մը եկեղեցոյ մէջ ճառ
կամ ատենաբանութիւն խօսելու
իրաւունք ունի այն ատեն միայն
երբ եկեղեցին բացառիկ պարա-
զաներու մէջ հանգամանաց ստիպ-
մամբ՝ կը դարձուի հանդիսավայր
վարդանանց տօնի և կամ դպրո-
ցական որ և է հանդիսի: Առ այս
այսչափ:

Ոտնուայի ատեն պնակ դը-
նելու, խաչահանգիստ կատարելու
և տօներու առթիւ շնորհաւորու-
թեան երթալու սովորութիւնները
տեղւոյն հանգամանքէն կախում
ունին: Այսինչ տեղ թոշակը մեծ
է՝ եկամուտի աղբիւրը փոքր, այն
ինչ տեղ թոշակը քիչ է կամ բը-
նաւ, հոն ալ եկամտի աղբիւրները
աւելի ընդարձակ: Հիւսիս մեզմէ
որ և է եկեղեցականի մը ընչա-
քաղցութիւնը պաշտպանել. ընդ-
հակառակը՝ զեղծումներու առա-
ջին հակառակորդներէն ենք: Բայց
որ և է պարագայի մէջ եկեղեցա-
կանի մը չափազանցութիւնը սան-
ձելու փորձը՝ աւելի լաւ չէ՝ միթէ
թաղ. խորհրդոյ միջոցաւ կարգադ-
րել՝ քան թէ լրագրաց սրենքու

վրայ (*) : Պանդուխտ քահանային գործն ալ այս կարգէն է : Ուշագրւած թիւնէ դուրս չենտենք նաեւ կարգ մը թափառաշրջիկ քահանայից աչքերուն արհեստական թացութիւնը :

Չպիտի արդարացնենք անշուշտ եթէ իրաւ են արժ. Տ. Յովակիմ քահանային 6-7 թիւերու մէջ վերագրուած անվայել արարքները , աննեղելի կրճատումները եւ եկեղեցական կարգապահութեան հակառակ շարժումները՝ որոնք ուղղուելու անհրաժեշտ կարօտ են : Այս ալ սակայն տեղւոյ թաղխորհրդոյ միջոցաւ ուղղելը անհրաժեշտ է : Թէ որ չանայ՝ այն ատեն կը մնայ խնդիրը ներկայացնել հոգեւոր բարձր իշխանութեան , այն ատեն անշուշտ կողմնակի թեւորակները : Եկեղեցական բարեկարգութեան համար նախանձախնդրութիւն տեսնել ժողովրդեան մէջ յոյժ ուրախալի է , պայմանաւ սակայն որ այդ նախանձը չլինելու համար ծառայէ , ոչ թէ տապալելու :

Իմ սոյն համետ տեսութիւնս նուիրելով Սիւրբաբայի Տէրաբերի վարժապետի խնդրոյն , ցանկութիւնս է խնդրել , աղաչել , պա-

(*) Արժ. նամակագրին այս խօսքին իմաստը պէտք է ճշդել : Այսօրինակ խնդրներու մէջ թաղ , խորհուրդներու պաշտօնը ուրիշ է , մտմալինը ուրիշ : Թաղ , խորհուրդը իր իրաւասութեան սահմանին մէջ կը միջամտէ ու կը կարգադրէ , մասնաւոր կը հրապարակէ ու կը քննադատէ : Եթէ Տէր Հայրը ըսել կուզէ թէ եկեղեցականներու արարքները հրապարակով քննադատուելու չեն , ալ միայն պաշտօնական մարմինները գիտնալու են , այդ տեսակ առանձնաշնորհում մը տրամադման հակառակ պիտի ըլլար ժամանակին ոգին եւ նոյն իսկ եկեղեցւոյ շահերուն , եւ հետեւապէս բոլորովին սնունդունելի :

զատիլ՝ որ այլ եւս վերջ գրտնեն այսպիսի սնամէջ իրարանցումներ՝ մանաւանդ ասոնց տեղի տրուող պատճառները , որոնք մեր ժողովրդի բարոյականը թունաւորելէ զատ ուրիշ օգուտ մը չունին : Մեր ժողովուրդը պէտք ունի եւ մեծ պէտք՝ հայրենիքի , վարդանի եւ եկեղեցիի սիրով հրահրուելու . այս սէրը թէ որ պակասեցնենք՝ ի՞նչ պիտի զենք նորատեղ . . . :

Յովնան քնյ. Մանդակունի 13/25 յունիս. 98, Սուշավա

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Ռուստոգ 18 յունիս
Դրեթէ տարի մը առաջ Տիար Հրաւիրի ուղղած եւ հետեւեալ նամակը որուն հրատարակութիւնը կրնայ չահեկան ըլլալ՝ վերջերս Արիւստի անուան շուրջը մղուած լրագրական բռնուկ պայքարին պատճառաւ :

Տիար Մ. Կ. Վառնա ,
Թէեւ ձեզ անձամբ ճանչնալու պատիւը չունիմ , կը յուսամ որ նամակս գրելու համարձակութեան ներողամիտ կըլլաք , պարզելով խնդրոյս հանրային հանգամանքը ի նկատի առնելով : Արիւստի նկատմամբ ինչ մը ամբաստանութիւններ կան հրապարակին վրայ . կը լսեմ թէ ատենց աղբււրը հրամանք է , եւ ամբողջ փաստերն ու տոյններն ալ ձեր մօտ կը գտնուին :

Յիշեալ ամբաստանութիւններուն բաւական մարդիկ հաւատացած են , բայց կան ալ շատեր որոնք կը պաշտպանեն Արիւստի , եւ զրպարտութիւն կը համարեն եղած ամբաստանութիւնները : Եթէ Արիւստի սոսկական մարդ մը ըլլար , ի հարկէ բազմաշխատ եւ խորունկ քննութեան մը ձեռնամուխ ըլլալու պէտք չէր ըլլար , բայց յիշեալ իրեն յայտնի գրազէտ եւ հասարակական գործիչ մեծ ժողովրդականութիւն կը վայելէ , եւ իր ազդին դաւաճանած ըլլալը կամ չըլլալը լաւ մը հաստատուել , կարծեմ , յոյժ կարեւոր է , քանի

որ ատով ազդին նորոգ չարիքներ հասցնելու ուժեղ դիրք ունեցող մը տապալած կըլլանք , եւ կամ ազգը զրկած կըլլանք կարող մարդու մը ծառայութենէն , անոր ճակարի ամօթի եւ նախատինքի մօտը քսելով եւ զայն բարոյապէս մեղցնելով :

Արդ յանուն ճշմարտութեան , եւ ազգին , բազմաշարժար ազգին էական չահերուն սիրոյն համար , կը խնդրեմ ձեր յարգելութենէն որպէս զի հաճիք :

1. Ձեր գլխաւոր ամբաստանութիւններն ը՛նդ Արիւստի դաւաճան եւ մասնիկ եղած ըլլալուն մասին :

2. Ձեր անձնական ծանօթութիւնները , եւ սեփական փաստերն ու տոյններն , եւ սեփական հանքեր :

Եթէ կարելի է անգամ մը քաղաքս գայիք , տեսնուէինք եւ իրարու օգնէինք «ճշմարտութիւնը , միմիայն ճշմարտութիւնը եւ ամբողջ ճշմարտութիւնը» գտնելու եւ հասկնալու : Դժբաղդաբար զբաղմանցս պատճառաւ ես չեմ կարող վառնա դալ , ատոր համար յօժար եմ ձեր երթալ գալու ծախքը տալ , եթէ հոս գալ հաւանիք :

Արհեստով ճարտարագէտ ըլլալով , խիստ գիտական մեթոտներու վարժուած եմ , ու իրականութիւնը շատ կը յարգեմ : Դիտական ոգին դարուս ոգին է , եւ եթէ հետազոտութեան գիտական մեթոտը լաւ բան մըն է , զրոնաւորութիւն պէտք չէ կրնաք վարժեցնելու անոր մեր ազգը որ դարերու ընթացքին մէջ հազար անգամ սուրի , հուրի եւ արեան միտտութիւնով է մղուած , եւ ջօշափելի , բիրտ , դառն ու անուշադ իրականութեան այնչափ ընտանի է եղած , Հազարային ըսաւներու եւ լսեցիներու երախայական մեթոտը որ մեր մէջ ալ եւ ալ մարդիկ եօթերորդ երկինքը հանելու եւ ցելի մէջ գլորեցնելու կը ծառայէ եւ ծառայած է , պէտք է որ ալ ջախջախուի :

Մնամ եւն :

Այս նամակին տեւէ պատասխան չընդունեցայ : Սկսած էի կասկածիլ . կը մտածէի թէ թիւերս Տիար Հրաւիրի եւ իր ընկերները դեռ հաւաքած ու կարգադրած չեն իրենց բոլոր փաստերը եւ տղիւմանները : Սակայն յանկարծ Ծաւր-ժուրին մէջ «Հազարէն մէկը» գոռ վերնագրով իր մէկ յօդուածը երեւցաւ որուն յօդորոշանքներէն դատելով ան-

կել , կամ երեսի գծադրութիւնը փոխել . մէկ օր հասարակ գիւղացու կերպարանք ստանալ , միւս օր հոգեւորականի , երրորդ օրը վաճառականի , չորրորդ օրը արհեստագործի եւայլն , եւայլն : Ի միջի այլոց պատմում են որ նա , զգուշութեան համար , երբէք միեւնոյն հազուստով չէր յայտնուում այնտեղ , որտեղ մի անգամ արդէն եղել էր . եւ այնպէս կարողանում էր կերպարանափոխ լինել , որ շատ անգամ նոյն իսկ մօտիկ ծանօթները չէին կարողանում նորան ճանաչել : Նա ման էր գալիս միշտ զգեստի տակից ոտից ցզլուի զրահաւորուած , եւ յամենայն գէպս իւր հետ ման էր անում թոյն , որպէս զի թշնամու ձեռքը ընկնելուց՝ կարողանայ ինքն իրեն վերջ տալ . նա հաստատ գիտէր , որ բռնուկուց յետոյ ալ եւս ազատութեան յոյս չ'կայ . . .

Նորա անձնաւորութիւնը վերին աստիճանի եւ համակրելի էր : Գործի մէջ նա լուրջ էր , խիստ եւ հրամայող : Գործից դուրս նա նոյնչափ կակուղ էր , հասարակ եւ զուարթ : Նորա վաղաժամ կնճիւղներով պատած ճակատը ցոյց էր տալիս , որ նորա միտքը զբաղուած է անվերջ եւ գծուաբին խորհուրդներով , իսկ նորա խոհուն եւ կրակոտ աչքերը ցոյց էին տալիս այդ մարդու

տեղի չափի ըլլար եւ թաղերէ թէ Տիար Հրաւիրի տեղէ մը կարաւանով փաստ եւ տղիւմէնդ է շրջուած : Յետոյ Ծաւր-ժուրի գրեթէ ամէն մէկ թիւի մէջ նա ճարձատեց եւ շատ ծուխ հանեց . սակայն պաղարին դիտողները ի դուր այդ ծուխին ներքեւ փնտնեցին կրակի կայծ մը որ չգտնուեցաւ :

Կը փափագէինք Տիար Հրաւիրի հարցնել . գրչի մարզանք ընելու թէ լըջու թիւերով ծանրակշիւ հարց մը լուծելու եղած էք : Որո՞ւ համար կը գրէք , դաւաղի՞րնեք , անմիջականութեամբ հարցնելու , անկողնակալ մասին համար : Եթէ ազնիւ հայ մարդերու համար գրել էր նպատակնիդ , կը համարձակիմ ըսելու . թէ անոնք ձեր գրածները կարդալով դեռ մասնաշափ մը չեն մօտեցած ճշմարտութեան : Ձեր հրատարակածները ցարդ շատ շատ Արիւստի նկատմամբ կասկած կրնան ներշնչել , ոչինչ աւելի : Բայց լաւ ի միտ առէք , փնտրուածը անձեւ եւ անգոյն կասկածներու հիւսուածքը չէ որը ձեր եւ ձեր նմաններու գրչին շատ նշտ կուգայ , ալ «ամէն կասկած վեր» , հաստատուած ճշմարտութիւնը : Խոհարարար կը թելադրեմ որ ձեր մօտ մնացած 999 փաստերն ու տղիւմանները հրապարակ հանելէ առաջ խիստ բովէ մը անցնենք զանոնք , ինչու որ շիտակ բան չէ ժողովուրդը այս կերպ իրազեկելու եւ լրագրի մը էջերը ոչինչ չութիւններով լիցնել :

Ի՞նչ է բուն խնդիրը , տղիւմաններ ունիք եղբիւր Արիւստի դաւաճանութիւնը ապացուցանող , խիստ բարի , երեւան հանեցէք ատոնք , անվախ եւ համարձակ՝ քննութեան ենթարկեցէք ատոնք : Ինչու՞ լոյսէն կը փախչէք , ինչու՞ ուրը ճամբաներու մէջ կը մտնաք : Անհնազ եւ չիտակ մարդու պէս շարժեցէք , խնդրեք պարզ է . մի ճապարկէք : Տոյններն թ . թ .

«ԻՐԱՆԻՆԻՔ»Ի ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

Կաւս. Տօպրից. Ստացանք :
Գ. Ռուստոգ . Հիմնովին ոխալ է այդ լուրը : Ծաւր-ժուրի խմբագրութիւնը ինքնուրուագի խոստացաւ . յայտարարել թէ այն թիւերէն մէջ , զոր ինք պնակալէր անուանած էր , պէտք չէ հասկնալ Իրաւունքը : Այս է բացարձակ ճշմարտութիւնը :

ՍԱՐԿԱԽԳ

(13)

Այդ ամենից յետոյ աւելորդ է առել թէ ինչքան մեծ պէտք է լինէր Լեվսկու հեղինակութիւնը եւ ազդեցութիւնը իւր ժամանակակիցների վերայ : «Սարկախ» անունը աւելի յայտնի եւ ժողովրդական էր ամբողջ Բուլղարիայում , քան թէ սուլթանի եւ տիեզերական պատրիարքի անունները , — ասում է Լեվսկու կենսագրութիւնը գրող Ջախարի Սթոյանով . . . Ինքն ըստ ինքեան հասկանալի է , որ թիւրք կառավարութիւնը սարկախազի վերայ նայում էր , ինչպէս իւր ամենավտանգաւոր թշնամու վերայ : Նա արդէն գնահատել էր նորա գլուխը . — Լեվսկուն սպանողը պէտք է ստանար 500 լիւրա (5000 բոլբի արծաթ) , իսկ նորան կենդանի բռնողը 1000 լիւրա . . .

Չ'նայելով որ Լեվսկուն բռնելը եւ կենդանի թիւրք կառավարութեան մատնելը , համեմատաբար շատ էլ զբոուար չէր , որովհետեւ շատերը նորան ճանաչում էին եւ բացի սորանից այդ զրույթեան մէջ նորան շատ դժուար էր խուսափել մատնութիւնից , այսուա-

մենայնիւ այնքան տարուայ մէջ ո՛չ մի բուլղար չ'գտնուեց , որը հրապուրուէր կասալարութեան այդ առատ վարձատրութիւնից : Լեվսկու բարոյական մեծութիւնը եւ անձնական յարգանքը այնքան մեծ էին , որ նոյն իսկ կեղտոտ եւ անաշուի մարդիկներ ժողով անգամ չէր անցնում կատարել այդ տեսակ սրբապգծութիւն եւ ձեռք բարձրացնել նորա վերայ : Բայց սորա փոխանակ թիւրք զափթիցէնիւրը եւ կառավարութեան լրտեսները ամբողջ խմբերով այնպէս էին հետեւում նորան , որ նոցանից խոյս տալու համար հարկաւոր էր չափազանց քաջութիւն , պաղարեւութիւն , ճարտարութիւն , հնարաղիտութեւն եւ ճարպիկութիւն : Լեվսկին առատութեամբ օժտուած էր այդ բոլոր յատկութիւններով . այդ պատճառով երկար ժամանակ կարողանում էր յաջողութեամբ խուսափել նոցա ամենայն քայլափոխում լայնածորողայթներից : Եւ եթէ վերջ ի վերջոյ նա բռնուեց , այդ հետեւանք էր միմիայն նորա յամառութեան . . . Իւր հետեւները ոչնչացնելու եւ հալածողներին մղորեցնելու համար Լեվսկին ըստիպուած էր համարեա ամենայն օր փոխել իւր արտաքին կերպարանքը : Նա ստիպուած էր կամ մազերը ներ-

անսանձան եռանդը եւ խելքը :
Մի խօսքով Լեվսկին իւր տեսակի մէջ միակ մարդն էր : Բուլղարիան նորանից յետոյ ալ եւս չէ ունեցել մի այդպիսի նմանօրինակ գործիչ :

Ը .
1872 թուականը Բուլղարիայի ազատութեան գործի համար մի չափազանց ծանր տարի էր : Այդ տարուայ մարտ ամսին Լեվսկու ամենամօտ բարեկամներից եւ ազատամարտիկան ամենահեռանդուն գործիչներից մէկը , Անդէլ Կէնչիւկ , Ռուստուգի մէջ կայնաւորուելով եւ ատրճանակը գլխին պարպելով ինքն իրեն սպաննեց : Նորա մօտ գտնուած նամակներից եւ թղթերից տաճկական կառավարութիւնը շատ հարկաւոր տեղեկութիւններ եւ ցուցմունքներ քաղելով բուլղարական կառավարչութեան մասին , ի հարկէ չըտապեց օգուտ քաղել նոցանից : Ամբողջ Բուլղարիայում եւ Թրակիայում սկըսուեցին անհամար ձերբակալութիւններ եւ գործին մատնակիցներից շատերը ընկան կառավարութեան ձեռքը : Այդ ձերբակալուածներից մէկն էր նաեւ Դիմիտր անունով մէկը , որը մի ժամ մահակ Լեվսկու հետ ման էր գալիս Բուլղարիայում եւ ուր իբրեւ փոփոխամիտ մարդ , շատ մեծ վստահութիւն էլ չէր վայելում թէ՛ Լեվսկու եւ թէ՛ միւս պարագլուխների կողմից :

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ

Կ. Պոլիս 15 Յունիս

Սոսկալի դաւի մը լուրը տարածալ-
նուած է մասնաւոր շրջանակներու մէջ.
հանրութիւնը չի լսեց զայն տակաւին:
Պատրիարքը եւ պետական խորհրդ-
դոյ նախագահն են գերակատարները
ասոնք յղացած են Սոսկալի իրաւա-
կան խնդիրը՝ Կաթողիկոսութիւնը Կ.
Պոլիս փոխադրելով լուծելու խորհուր-
դը, որուն գործադրութեան համար
հիմա Պատրիարքը եւ Դուռը բանակ-
ցութեան մէջ են: Մինչեւ իսկ որոշ-
ուած է Օրթոդոքս Սինոն Մագստարի
տունը կաթողիկոսարան ընել եւ տեղ-
ւոյն եկեղեցին կաթողիկոսական ա-
թոռ: Բանակցութիւնները բաւական
ժամանակէ ի վեր կը կատարուին, սա-
կայն մինչեւ հիմա բացարձակապէս
զաղտնի կը պահուին, այնպէս որ այս
օրեր միայն լուրը սկսաւ տարածուիլ:
Ամենէն վտանգաւոր կէտը սա է որ
Պոլսոյ կաթողիկոսը բոլոր Թուրքիոյ
հայերու հոգեւոր պետը պիտի ըլլայ.
այս է Դրան փափագը. այդ պարագա-
յին մէջ բնականաբար էջմիածնի Ա-
թոռը պիտի դադրի ընդհանրական ըլ-
լալէ եւ ուսանալոց միայն պիտի վե-
րաբերի. հետեւապէս էջմիածնի Կա-
թողիկոսը ալ չպիտի յիշուի Թուրքի-
ոյ եկեղեցիներուն մէջ, մեր բոլոր ե-
պիսկոպոսները Օրթոդոքսի մէջ պիտի
ձեռնադրուին եւս: Յայտնի է թէ ե-
թէ այս ծրագիրը կառավարութիւնը
եւ Պատրիարքը յաջողին երբեք գոր-
ծադրել, որքան ծանրակշիռ եւ աղե-
տալի պիտի ըլլան հետեւանքները թէ՛
Թուրքիոյ եւ թէ՛ Ռուսիոյ հայերուն
համար, որոնք զատ, իրարմէ անջատ
մարմիններ պիտի մնան ու աւելի զիւ-
րաւ պիտի հալածուին, ճնշուին իրենց
վրայ տիրող տարրին կառավարութե-
նէն:

Ինչ պիտի ըսէ սակայն հայ ժողո-
վուրդը, Հայազգի պաշտօնեայինը, ա-
ռանց բացառութեան, տարակոյս չը-
կայ. նպատակաւոր դիրք մը պիտի բռն-
են ձեռնարկին հանդէպ, կամ գոնէ,
լուծութիւն պիտի պահեն: Հայ վաճա-
կանները, առհասարակ բարեկեցիկ դա-
սակարգը, իր ընկերական գիրքին սի-
րոյն համար, խոհեմութիւն պիտի հա-
մարի նոյնպէս լուր. Սակայն եկեղե-
ցականութեան գոնէ մէկ փոքր մասը
չատ յուսալի է որ չպիտի հանդուրժէ,
պիտի բողոքէ, պիտի գոռայ, ամէն վը-
տանգ յանձն առնելով, իրեն կտուէն
պիտի երթայ արեւմտաւոր, հասարակ
ժողովուրդը, որ ինչպէս յայտնի է,
կրօնական խնդիրներու մէջ, ճնշումի
տեղի չի տար ու բռնաբարութեանց
դէմ առիւծ կը կտորի, իր բոլորքովն
մէջ չափ չի ճանչնալով եւ ամէն վտանգի
դէմ խիզախելով: Վկայ է գերեզմանա-
տան խնդիրներու պատմութիւնը:

Այդպէս է առ այժմ մեր բոլոր յոյ-
սը:

ԼՐԱՔԱՂ

Իսկիւտարի (Պոլիս) ամերիկ-
եան աղջկանց վարժարանէն այս
տարի շրջանաւարտ եղան երեք հայ
աշակերտուհիներ:

Սգերգի նախկին առաջն. տե-
ղապահ Թէոփորոս վարդապետ
Տիվրիկեան, որուն կորսուած ըլ-
լալը ծանուցուած էր, գտնուել է
Տիրապէքի մէջ, ուր եկած է
զաղտագողի եւ առանց անցազրի,
վարդապետին այս տարօրինակ
ընթացքին բուն պատճառը յայտ-
նի չէ տակաւին: Վարդապետը ազգ.
անուակէն 70 մէծիտի շորթեր
ու անանկ հեռացիր է Սգերգէ:

—Ս. Հայրապետը վարդապե-
տական ականակու լանջախաչ մը
նուիրել է Գորուի Ախալքալաք

գիւղի ձերուհի Տ. Յովհաննէս Ա.
քահանայ Տ. Գալուստեանի որ իր
անձնական ծախքով շինած է գիւ-
ղին հոյակապ եկեղեցին եւ անոր
կից ուրիշ շէնք մը:

—Գեր. Գրիգոր Կախի. Աղա-
փիրեանց վանահայրն է Ագուլիսոյ
Ս. Թովմաս վանքին մէջ: Հան-
գուցեալը 71 տարեկան էր եւ խա-
ձըր կրթութիւն ստացած: Լազար-
եան ճեմարանի դասընթացը ա-
ւարտելէ հետք, Տօրպաթի հա-
մալարանի մէջ կատարելագոր-
ծած էր իր ուսումը: Զանազան
հոգեւորական եւ կրթական պաշ-
տօններու մէջ օգտակարապէս ծա-
ռայած է ազգին մինչեւ 1895, ուր
հանրային գործունէութենէ հե-
ռանալով, քաջուեցաւ Ս. Թովմասի
վանքը եւ հոն մնաց մինչեւ իր
մահը:

—Ս. Էջմիածնի ճեմարանին նը-
կարչութեան տաղանդաւոր նախ-
կին ուսուցիչ Տ. Եղիշէ Թադէոս-
եան ճեմարանի հիմնադրին մէջ
մեծագիր եւ շատ ընտիր պատկերը
նկարելով, նուիրել է զայն յիշ-
եալ հաստատութեան:

—Շարլօթէնպոլի (Պէռլինի
մօտ) ճարտարապետութեան զբա-
ղուցի ուսուցչապետ Տ. Եակօպօ.
Թալ որ անցեալ տարի, Միւսոն
օրհնութեան օրը էջմիածին գա-
լով սիրալիր ընդունելութիւն զը-
տած էր, իր շնորհակալութեան
իրը նշան՝ իր հրատարակած մե-
ծաքանակ, Թանկագին գծագրու-
թիւնները՝ ճարտարապետութեան
արուեստին վերաբերեալ՝ նուէր
զրկիլ է ճեմարանի մատենադարա-
նին:

—Բագուցի աղագայիններէն ու-
մանք անցեալ տարի յանձն առած
էին 28 որբ պահել եւ կրթել տալ
Սանասարեան վարժարանին մէջ:
Ուրախաբար է իմանալ թէ կըլ-
թասէր աղագայիներու պաշտպա-
նութեան շնորհիւ յառաջիկայ տա-
րի շրջանի մէջ 22 տղայ եւս պիտի
աւելնայ Սանասարեանի որբ աշա-
կերաներու թիւին վրայ, որ այս-
պէս 50ի պիտի հասնի:

—Գաւառներէ պատրիարքարան
հասած պաշտօնադրեր կիմացնեն
թէ տեղական իշխանութիւնները
կը թոյլատրեն ազգայիններու գա-
ւառէ զաւառ ուղեւորութիւնն ու
տեղափոխութիւնը, եթէ առաջ-
նորդարանները երաշխաւոր ըլլան
անոնց պատուաւորութեան:

—Ամերիկայի Գօնզօրտ քաղա-
քի ՅՍԻ չափ աղագայինները 16
անգլ. սակի զրկել են Պատրիար-
քարան՝ որքերուն համար: Պատ-
րիարքը օրհնութեան գիր մը զը-
կել է նուիրատուներուն, որոնց
յորդոր կարգացրել է մասնաւորա-
պէս՝ չի մոռնալ իրենց հայրենի
«օճախ»ը եւ իրենց կէտ նպատակի
ընտրել օր առաջ հայրենիք վե-
րադառնալ: Օրհնագրին իբր պա-
տասխան՝ Գօնզօրտի հայերը վեց
ոսկի եւս զրկել են որքերուն հա-
մար:

—Արարիկերի առաջ. տեղապահ
Տ. Մուշեղ վարդ. ձեռնարկել է
աշխարհաբարի Թարգմանել Նա-
րեկը, որուն ԼԱ. զրուխը հա-
սած է:

—Կրօնական ժողովը որոշել է
կարգադրել ընել Կէօքեան կի-
րակոս վարդապետը, որ թէպէտ
ազախարարութեան համար Մար-
գուանի Ս. Աստուածածնի վանքը
զրկուած, սակայն հոն բռնի կեր-
պով պատարագ մատուցել եւ իր

գինեմուլութեան հետեւանքով՝ իր
վիճակին եւ կարգին բացարձակա-
պէս անվայել ընթացքներու մէջ
գտնուել է:

—Կ. Պոլսոյ Ռօպէրթ Գօլէճի
այս տարուան 14 շրջանաւարտնե-
րուն մէջ, որոնք մեծ մասով Պուլ-
կար եւ յոյն են, երկու հայ պա-
տանիներ միայն կան, որոց մին,
Քերոյմէ Սիսակեան, անգղիերէն
գրած է իր շրջանաւարտի ճառը,
նիւթ ունենալով «Գեղարուեստի
ձգտումը», իսկ երկրորդը, Լեւոն
Տօմիեան, ֆուսսերէն լեզուով
գրած է արգել Ս. Պապին ներքո-
ղը, «Ժամանակակից մեծ դէմք
մը» խորագրին ներքեւ:

Այս տարի հայերէն ճառ չէ ար-
տասանուած հանդէսին մէջ:

—Էջմիածնի սինոդը որոշել է՝
Սեւանի անապատը ապաշխարելու
զրկել Ղազար Գաւառի Գօշապանք
գիւղի Աւետիս քահանայ Աւետիս-
եանը, որ թէ եւ սինոդի հրամա-
նով քահանայագործութենէ դադ-
րած՝ սակայն այդ հրամանին դէմ
ըմբոստանալով՝ շարունակել է իր
անկարգութիւնները, կատարելով
չհաս պատկեր եւ իւրացնելով էջ-
միածնի հասոյթներ:

—Բիզզաւիյոնի անցած շաբաթ
եւ երկուշ. օրուան թիւերէն կը քա-
ղենք հետեւեալ տղերք, որոնք
հակառակ իրենց մթին եւ անորոշ
բացատրութեանց՝ կը ցուցնեն թէ
ազգ. շատ կորեւոր խնդիրներ բա-
նակցութեան առաքելայ են Պատ-
րիարքարանի եւ Դրան միջեւ:

«Ս. Պատրիարք Հայրն երեկ նա-
խագահեց խառն ժողովոյ նստին:
Ինչ ինչ գործերու առթիւ իր դի-
մումները նախարարաց մօտ եւ տը-
նօրինութիւնները ժողովական հայ-
րերուն եւ աշխարհական անդամնե-
րուն գնահատութեան արժանա-
ցան . . . Կը լսենք թէ խառն
ժողովոյ վերջին նստին մէջ արտա-
յայտուած գոհանալիութենէն իր
բաժինը ունեցած է Բարձ. Ատե-
նապետ փաշան ինքն եւս որ իր
սիրալիր խորհրդակցութեամբ եւ
փութալան գործակցութեամբ ոչ
սակաւ դիւրացուցած է Ս. Պատ-
րիարք Հօր զանազան դիմումներն
ու ձեռնարկութիւնները՝ օրակար-
գի ինչ ինչ խնդիրներուն ու գոր-
ծերուն հարթման եւ կարգադրու-
թեան համար: Թէեւ նոյն ժամու-
նայուր զբաղած ըլլալուն համար
Յարութիւն քաջա չէ կրցած ներ-
կայ ըլլալ խառն ժողովոյ վերջին
նստին, բայց անժխտելի է թէ
օրակարգին վրայ գտնուած գոր-
ծերուն կարգադրման համար իր
աշխատակցութեան բաժինը եր-
բէք չէ խնայած:

—Գարակէօզեան կտակին խըն-
դիրը ուր որ էր, հոն կը մնայ
անշարժ: Յանձնաժողովը չաճապա-
րեւ, Գրիգոր էֆ. ին ալ բնաւ փոյթ
չընեն բնականաբար եւ մինչեւ իսկ
հաւանութիւն կուտայ եղբր՝ Գա-
րակէօզեան կտակը ազգ. հանգա-
նակութեամբ մը գործադրելու ա-
ռաջարկին:

—Տ. Ա. Պօղոսեանի Ռուսահա-
յոց հրատարակչական ընկերու-
թեան վերջերս նուիրած 10000
ր.ին կէսը պիտի յատկացուի ման-
կական եւ ժողովրդական գրքերու
հրատարակութեան, իսկ միւս կէ-
սը կը մնայ ընկերութեան տրա-
մադրութեան ներքեւ, որպէս զի
իր տեսութեան համեմատ այդ գը-
րամին տոկոսովը գրական մրցա-
նակ հաստատէ:

ՍՈՍԿԱԼԻ ԵՂԵՌ ՄԸ

Ամերիկացի մարդասէներու նը-
պատում իշմիրի մէջ հաստատու-
ած որբանոցի մը տնօրէնը, Տօքթ.
Ֆերքէն, քանի մը հայ որբուհի-
ներու վրայ անբարոյական տարբե-
ներու մէջ գտնուած է:

Տեղւոյն աղջ. վարչութիւնը եղե-
լալութիւնը իմանալով, կառավարու-
թեան կը դիմէ: Ամերիկեան հիւ-
պատոսին եւ ամերիկեան պատուա-
ւոր միսիոնարներու կողմէ կար-
գուած քանի մը բժիշկներ նախ-
նական քննութիւն մը կը կատա-
րեն նախ մէկ քանի որբուհիներու
վրայ որ ազգ. հիւանդանոցը փո-
խադրուած են եւ ապա նոյն իսկ
որբանոցին մէջ: Բժիշկներուն տե-
ղեկագիրը ոճիրը կը հաստատէ:
Կառավարութիւնը խնդիրը ձեռք
առած է եւ յանցաւորը դատի են-
թարկած:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Տ. Պրիսոն յաջողեցաւ ֆրանսա-
կան նախարարութիւն մը կազմել,
որուն մէջ տիրող տարրը արմա-
տական է: Նոր նախարարութիւ-
նը յայտարարութեամբ մը ներկա-
յացաւ երեսփոխ. ժողովին որ շատ
լաւ ընդունելութիւն մը ըրաւ նոր-
ընտիր նախարարներուն: Այժմա-
տական թերթերը շատ գոհ են
բնականաբար եւ երկրին համար
մեծ բարիքներ կըսպասեն Տ. Պը-
րիսոնէ եւ իր ընկերներէն: Զափա-
ւոր հանրապետական թերթերը
կընդունին որ Պրիսոն կայացութեան
տէրն է, կը յաւելուն սակայն թէ
երեսփ. ժողովի մեծամասնութիւնը,
որ առ այժմ անոր լոյսբանքը հա-
ւաքուեցաւ, տեւականութիւն չի
խոստանար, որովհետեւ անհամա-
րաշխ, սկզբունքներով իրարմէ
շատ տարբերող տարրեր կազ-
մուած է: Պահպանողական թեր-
թերը կը պարծին թէ հիմա
արմատականութեան յառաջա-
դացութիւն դէմ իբր մինակ թու-
կանգնած է միմիայն պահպանո-
ղական կուսակցութիւնը: Ընկեր-
վարականները կը խոստանան չե-
զոք մնալ ու չի շարժիլ Պրիսոնի
նախարարութեան դէմ, եթէ այս
վերջինը յարգէ իրենց ազատու-
թիւնը:

—Իտալական նոր նախարարու-
թիւնը նոյնպէս կազմուեցաւ զօ-
րապետ Բէլուչի նախագահութեան
տակ եւ ինչպէս կը տեսնուի գա-
ւառապետներու զրկուած հրա-
հանգներէն, շատ խիստ ընթացք
մը պիտի բռնէ ընկերվարականնե-
րու եւ անիշխանականներու խռովա-
յոյզ արարքներուն հանդէպ:

—Միստիփանի ուսու բանակա-
տեղին վրայ յարձակում գործող
խաւաճ պաշտամունքներուն պետը,
Մուհամմէտ Ալի խալիֆ, եւ իր
հինգ զլխաւոր գործակիցները
կախուկու դատապարտուեցան պա-
տերազմական ատեանէն, վճիռը
գործադրուեցաւ տեղացիներու ձեռ-
քով, ի ներկայութեան տեղացի
ժողովուրդին, զոր ուսու վարչու-
թիւնը հարկադրեց հանդիսատես
ըլլալ պատիժին գործադրութեան:
Այն գրօշակները զորս ապստամբ
ները կը կրէին իրենց յարձակման
ատեն՝ այրուեցան հրապարակաւ:

ՏԱԽԻԼԻՅԷ

Բրէնսէս հազարէթէրի էպէնթաւ-
տան Սօֆիայա ավտէթ վէ օրա-
տան վառնայա միւլասէթէթ իթ-
միլէր տիր :

—1886 օգոստոս 9 վոլգոլա-
թընտան պէրի ռուս օրտուսընտա
մէմուրիթէթտէ պուլընան քարի-
թան Կ. Էվթաթի Սօֆիայա ավ-
տէթ վէ կինէ պուլկար օրտուսը-
նա տախիլ օլմուլ տըր :

—Բիրինճ թարալարը մէսէլէ-
սինի թէտգիթ իթմէթ իւլըն մա-
լիյէ նէզարէթի թարաթընտան պիր
գօմիսիօնը մախսուս թային օլուն-
մուլ տըր :

—Մօնրէլիէ (Ֆրանսա) թըպպի-
յէ մէթթէպինտէ թահսիլի իլմ
իթմիլ օլան էն ասըլ թընօվալը
մատամ տօգթօր Տիմիթրօֆ Ֆը-
րանսատան ավտէթ վէ Սօֆիայա
միւլասէթէթ էյլէմիլ տիր :

—Սօֆիատա Ալէքսանտր խաս-
թախանէսինտէ թէտալիտէ պու-
լունան Սօքօլ Ալէքսօֆ նամ մէճ-
նուն՝ խասթախանէ հալիուսընտա
պիր աղաճ ալթընտա ուլումադ-
տա օլան պէթի Ս. Նիգօլօֆ իւ-
զէրինէ սալարադ անը գալիլ իթ-
միլ տիր : Մէրգոլմ տէլի պիր
գալ սէնէ ագտէմ տախի քէնտի
բէտէրինի թէլէթ էյլէմիլ իտի :

—Վառնալը միլլէթտաշլարը-
մըզտան Տ. Աւետիս Արէլեսան վէ
Տ. Յովհաննէս Կարապետեան Սօ-
ֆիա հարպիյէ մէթթէպի միւտ-
տէթի թէտրիսիյէսինի իքմալ վէ
օֆէցէր ըրիթպէսինի ախզ իթ-
միլէր տիր :

ՄԻԻԹԵՆԵՎ ՎԻԵ

Էրմէնի գըրկընլարը էսնասըն-
տա կէթէթ Սթանպուլում վէ կէրէթ
վիլայէթէրտէ ֆրանսըլ թապատ-
լարըն տիւլար օլտուգլարը գա-
լարըն թաղմին օլունմասընը ֆը-
րանսա սէֆիրի Պապը Ալիտէն
թալէպ իթմիլ տիր : Իթալիա սէ-
ֆիրի տախի ախը թալէպի իթ-
միլ տիր : Ֆրանսըլլարըն գարա-
րը պիր միլիօն 50 պին ֆրանգա ,
իթալիանլարըն գարարը իսէ 400
պին ֆրանգա պալիլ օլմուլ տըր :
Ֆրանսա սէֆարէթի՝ ալաֆր.
յուլիս 10ա գատար պու մաթ-
լուպը իճրա օլունմատըղը հալտէ ,
Եունանիսթան թաղմինաթը հար-
պիյէսինին սօն թաղսիտի իւզէ-
րինէ սէթվէթրօ գօյաճաղընը
պիլտիրմիլ տիր :

—Եունանտան ալընան թաղմի-
նաթը հարպիյէսէն 10 պին լիւրա
Կիրիտ իսլամ միւլսթաճէյիէ թէվ-
զի օլմասընը Սուլթան էմր իթ-
միլ տիր :

—Սերպիա գրալը եէնի ինթի-
խապ օլընան Սգուպիինայը (մէ-
պուսան մէճլիսի) պիր նուլթգ իլէ
քիւլաա իթմիլ տիր :

—Ինկիլթէրա վիւքէլա մէճլիսի
րէյիսի լօրտ Սօլզպէրի ախիւրէն

Լօնտրոտա պիր նուլթգ իյրաա ի-
տապ , Սպանիա վէ Ամէրիգա
մուհարէպէսինին խիթամ պուլմա-
սընա ինկիլթէրանըն ալլաքէլ
օլտուղընը ու ումուլի Էվրօրա բօ-
լիթիգասընտա շիմտիքի հալ խէֆ
ու էնտիլէյէ մուճիպ պիր մէսէլէ
պուլունմատըղընը պէյան էյլէմիլ
տիր :

—Յունիս 18 տէ վոսթորա կի-
րէն Յարիցա նամ ռուս վարօնը
Լօյտ գուլմանէսընըն Մէտիա
վարօնընա վուրուլմըլ տըր : Մէ-
տիատան զիատէ Յարիցա գարար-
տիտէ օլմուլ տըր :

—Գարատալ Բրէնսի՝ Առնա-
ուտ իսթիլալըն էօնիւնիւ ալմաթ
իչիւն թիւրք հիւքիւմէթին իպ-
րազ իթտիլի սայ ու զայրէթտէն
սուլայը պա թէլէկրաֆ Սուլթա-
նա թէլէքէրընը պէյան վէ պա-
տէհու Չէթինէ թիւրք մասլա-
հաթ կիւզարընը զիյարէթ իտուպ
թէլէքէրընը թէքարալմըլ տըր :

—Մըսըր խտիլի Ապաա բաշա
Գօրֆու վէ թրիէստ թարիգի ի-
լէ վիէննայա աղիմէթ իտէճէթ ի-
միլ :

—Բօւթօ Լուիս ֆրանսա գօն-
սօլսը մահալի հիւքիւմէթինին
րէսմի թարգիյէսինի գապուլ վէ
եէնիտէն մէմուրիյէթի իճրասընա
միւլաշէրէթ էյլէմիլ տիր :

—Սթանպուլում Բուսիա, ինկիլ-
թէրո, իթալիա վէ Ֆրանսա սէ-
ֆիրէրի Կիրիտ մէսէլէսի հազըն-
տա պիր իսթիլարէտէ պուլուն-
մըլլար տըր :

—Եունան գրալիշաալը բրէնս
Անտրէ վէ Գրիսթօֆ իլէ պէրա-
պէր Բէլթէրսպուրկա աղիմէթ իթ-
միլէր տիր :

—Սթանպուլ իթալիա սէֆիրի
Մ. Բանգա մէզգունէն Բօմայա
կիթմիլ տիր :

—Պէրանըն եանմըլ օլան քէօյլէրին
եէնիտէն ինչասը վէ խրիսթիյան
քէօյլիւլէրին քէնտի մէսքեանլա-
րընա ավտէթ իթմէլէրի հազըն-
տա Մօնթէկրօ հիւքիւմէթի թա-
րաֆընտան թային օլունան Մար-
թինօվիլ վէ Սաատէթտին բու-
շա պէյնինտէ միւլաքէրաթ իճ-
րա օլունմագտա տըր :

—Համիտիյէ քիւրտ ալալլարը
միսիլիւ եալընը Արնապուլար-
տան պիր օրտու թէլէթի իթմէթ
մէսէլէսի Եըլտըլ հարպիյէ գօմի-
սիօնը թարաթընտան թահթըլ թէ-
զէքէրէրէ ալընմագտա տըր :

Ֆիլիպէ աւադ երէցի Տ. Արիստա-
կէս Ռուսուգլիան հայըն պիր
գալ ալտան պէրի տիւլար օլտու-
ղը հասթալըգտան խէլաս օլամա-
յուպ , յունիս 15 տա վէֆաթ իթ-
միլ օլտուղը թէէսիւթը աղիմէթ
մէսմուլմիլ օլմուլ տըր :

Մ Ո Ւ Հ Ա Ր Է Պ Է

Մըսըր հիւքիւմէթի ամիրուլ
Գամարայա Բօւ. Սայիտտէն քէօ-
միւր ալմաղա միւսատտէ իթմէթի

Օն տէօրթ պէօյիւք վէ քիւլիւք
սէֆինէտէն իպարէթ օլան Սպա-
նիա ֆիլօսը Սուէլ պօղաղընտան
կէլտի :

Մատրիտտէն կէլլէն խապէրլէրէ
կէօրէ Մանիլա էհալիսի սօն նէ-
ֆէսինէ գատար տիւլմանա գարըլ
գօյմաղա վէ ասլա թէսլիմ օլմա-
մաղա գարար վէրմիլ տիր :

Մուհարէպէյէ խիթամ վէրմէթ
զըմիւնտա պէօյիւք տէվլէթէրին
մուխապէրաթտա պուլունտըղընա
տայիր վուգու պուլան շայիայը
Սպանիա վիւքէլա րէյիսի Մ. Սա-
կասթա քիւլլիյէն թէքիլպ վէ
մուհարէպէյէն խիթամ պուլմաճա
վազըլթըն տահա կէլմէթիլ օլտու-
ղընը պէյան էյլէմիլ տիր :

Ֆիլիւրին աուսլարը վալիսի Մա-
նիլա շէհրինի օրատա հաղըր պու-
լընան պէօյիւք տէվլէթէրի սէֆի-
նէլէրի գօմանանլարընա մուլադ-
գաթ սուրէթտէ թէսլիմ իթմէթ
իսթմիլ իսէտէ , Ալմանիա սէֆի-
նէլէրի գօմանտանը ամիրալ Տիտը-
րիս իշպու թէքիլթի րէտտ իթ-
միլ տիր :

Յունիս 19 տա սապահլայըն Ա-
մէրիգալըլար տէնիլտէն վէ գա-
րատան Սանթիակօ իւզէրինէ ու-
մուլի պիր հիւքիւմէթ միւլաշէրէթ
վէ տիւլմանըն պիր գալ իսթիւ-
քեանմըն գապթ իթմիլէր տիր :
Գալիկա ազլամա գատար տէվլա
իթմիլ վէ Ամէրիգալըլար թարա-
ֆընտան պին քիլի թէլէթ օլմուլ
տըր :

Սպանիա սէվահիլինի վուրմադ
իչիւն Ամէրիգա սէֆինէլէրինին
Սպանիա սուլարընա վիւրուտ ի-
տէճէկինտէն գօրգուլտըղը սէ-
պէպլէ , Սպանիա հիւքիւմէթի
իգթիլաի հալտէ պաղը շէհրէլէ-
րին մուհաֆաղաալը իչիւն 26000
աաքէր սիւհալ ալթընա չաղըլմա-
սընա գարար վէրմիլ տիր :

Բօրթօ. Ռիգօտա հիւքիւմէթ
գօնաղընը տինամիթ իլէ հալայա
ուլուրմադ վէ Սպանիայա գարըլ
եէրի էհալիյի ալաղա գալտըրմադ
էֆթեարը իլէ թէլէթ օլմուլ պիր
կիլլի գօմիթէյէ ալիտ մէթթէպլէր
բօսթատա թուլթուլուլ օլտուղը
սէպէպլէ , բօլիցիա պէլքիլ թէվ-
զիթ իթմիլ օլուպ պուլնարտան
իքիսի հարպ տիվանը գարարը ի-
լէ գաթլ օլունտըլար :

Գալիլթէտէն ալընան խապէր-
լէրէ կէօրէ՝ աալար թէքմիլ Պուլա-
գան գաղաալընը եէտը գապթա-
լընա կէլիլմիլլէր վէ 500 սպան.
եօլ տաքէրի գարայա չըգարմադ
նիլթի իլէ Գուլաթաա քէօրֆէլի-
նէ կիլմիլ օլան Պօհուլ նամ կէ-
միլի շէտիա պիր գալիկատան սօն-
րա գապթ իթմիլլէր տիր :

Պուլագան գօմանտանըն ֆամիլ-
եաճա աալար էլինէ եէսիր տիւլ-
միւլ օլտուղընը Ամէրիգա կազէ-
թալարը պիլտիրիթօլար :

Ճիւմհուրիյէթ րէյիսի Մ. Մաթ
Ֆիլիլինի գապուլ իթտիլի գայըր
րէսմի պիր թէլէկրաֆ՝ յունիս 20.

տէ Սանթիակօ իւզէրինէ Ամէրի-
գալըլար իտալիլընտան իքիւնի
տէֆա օլտուրադ ումուլի պիր հիւ-
ճուլմ վէ խալըլ թէլէֆաթ վուգու
պուլտուղընը պիլտիրմիլ իսէ տէ ,
գալիկանըն նէթիճէսինէ տայիր
հիլ պիր մալիւմաթ վէրմէթիլ տիր :

Փ. Պօլսէն կը գրեն մեզ թէ
Տ. Տօթթ. Բենիամին Յ. Եազմաճ-
եան յաղուլթեամբ անցնելով իր
քննութիւլը ի Սօֆիա, արտօնուեր է
ըժշկական արհեստը գործադրել
բոլոր Պուլկարիոյ մէջ :
Միւր անկեղծ խնդակցութիւնը
հայ տօթթօնին :

ՁԱՒԻՐԻ ԲԻԱՅԱՍԸ

Վառնա 23 Յունիս
Պուլտալ
Վալիօն եօգլիպրա 47-51 , հէթթօլ.
7-8 ֆրանք
Արապա , լիպրա 47-55 հէթթօլ.
7-7 1/2 ֆրանք
Արապ
Լիպրա 38-40, հէթթօլ. 5-5 1/2
ֆրանք
Ֆաուստա
100 օգգասը 15-20 ֆրանք՝ մալա
կէօրէ
Արապա մուամէլէսի՝ Նարօլէն
21 ֆռ. հիսապը իլէ տիր .
Կիւնտէ 5—6 արապա պուլ-
տայ, 4—5 արապա արապ կէլմէթ-
տէ տիր : Մըսըր եօգ տըր :

Լոյս տեսաւ
ԲԱՅՅԻԻ
ՍԱՄՈՒԷԼ
Պատմական վեպը
Ա. Բ. Գ. Գիրք
Հնդկական վերջին պատկերով

Գինն է 7 չիլինգ

Իսկ «Դաւիթ-Բէկ» հատոր Ա.
Բ. եւ Գ. վերջաբանով եւ «Կայ-
ծեր» հատոր Բ. լիակատար, լոյս
պիտի տեսնեն ներկայ տարուայ
ընթացքում, որոնց բաժանորդա-
գրութիւնը շարունակուում է. եր-
կու գրքի միասին բաժանորդա-
գինն է՝ 10 չիլինգ. իսկ լոյս տես-
նելուց յետոյ կարծեսան 14 չիլինգ :
Ցանկացողները թէ՛ Սամուէլի
եւ թէ՛ Բաֆֆիի միւս երկերի հա-
մար, կարող են դիմել այս հասցէին

Mme Raffi
270, Uxbridge Road.
Shepherd's Bush,
London W.

Տ Պ Ա Ր Ա Ն

Լրագրիս վերջին երեսի սիւ-
նակներուն մէջ օտար լեզուներով
ալ աղբիւր կը գետեղուին : Ա-
ռանձին կը տպագրուին գրքեր,
տետրակներ ու կը պատրաստուին
հայերէն, պուլկարերէն, ֆրան-
սերէն եւ յունարէն լեզուներով
ընկալադրեր , հասցէներ, հար-
սանհաց եւ այլ հրաւիրադրեր,
այցաքարտ եւ այլն :

ԳԵՆՐ ՁԱՒԱՒՈՐ
Փափագողք պարտին դիմել խըմ-
բագրութեան հասցէին :